

## Յ ա ո ա ջ ա ր ա ն

**Տ**արիներու աշխատութեան արդիւնք է այս երկասիրութիւնը, որ վերջապէս լոյս կը տեսնէ այսօր :

Բարեկամներս շատ անգամներ մեղադրած են զիս, որ մինչեւ հիմա երկարաշունչ աշխատութիւն մը չեմ հրատարակած. սակայն պէ՛տք է ըսել, որ բանասիրական լուրջ եւ «երկարաշունչ» աշխատութիւն մը հրապարակ հանելու համար երկար ալ ժամանակ պէտք է դնել: Ե՛ս գիտեմ, թէ ներկայ գործիս համար որքա՛ն ժամանակ վատնած եմ, ի՛նչ նեղութիւններ կրած եմ անուն մը, բառ մը, եւ նոյն իսկ ստորակէտ մը ճշտելու համար, որմէ կախում ունէր դէպքի մը լուսաբանութեան կամ վաւերականութեան խնդիրը: Երկրորդ եւ աւելի մտմտուք պատճառողը՝ հրատարակութեան համար միջոցներու սղութիւնն եղած է, որ արգելած է զիս հրապարակ հանել ընդարձակ ձեռնարկութիւններէս մին կամ միւրը: Իսկ այսօր որ ներկայ գործս լոյս կը տեսնէ, այն գումարով է, որ հաւաքուած էր ողբացեալ Գաբրիէլ Էգնայեանի յիշատակն յարգող բարեկամներուն ու իրմէ երախտաւորեալներուն միջեւ, դրական ո՛ր եւ է եղանակով ապացուցանելու համար իրենց յարգանքը: Գրականութիւնն ու գիտութիւնը գնահատող եւ անոնց հետեւողներու Մեկենաս հանդիսացող անձի մը համար, որպիսին էր հանգուցեալը, ուրիշ ի՛նչ աւելի յարմար եւ հաճելի էր քան գրական յիշատակարան մը, որ կը դրուի այսօր իր գերեզմանին վրայ:

Գաբրիէլ ծնած է 1849 թ. մայիսի մէջ, ի Կ. Պոլիս, Քում-Քափու, Նիշանջըր թաղը: Նախնական ուսումն առած է նախ Քում-Քափուի Մայր-Վարժարանին մէջ, եւ յետոյ՝ Բէշիկթաշ փոխադրուելով՝ Օրթագիւղի Թարգմանչաց վարժարանը, որուն ընթացքն աւարտելով մտած է Փանկալթիի Օսմ. Պատերազմական վարժարանը: Այս վարժարանը զուտ զինուորական ըլլալով, սկզբէն ի վեր մի միայն մահմէդական երիտասարդներու համար բացած է իր դռները. բայց սուլտան Ազիզ փորձ մը կատարել ուզելով՝ հրամայած է ոչ-մահմէդական ուսանողներ եւս ընդունիլ: Փորձի համար ընդունուածներէն առաջին եւ վերջին խումբն եղած է Գաբրիէլ Էգնայեանի խումբը, որուն մէջ կը գտնուէին նաեւ Կարապետ Բարաղամեան, Սիմոն Տատեան, Հովեան եւ Սինապեան: Արդ՝ Գաբրիէլ փայլուն քննութիւններէ վերջ, 1873-ին, կաւարտէ վարժարանին ընթացքը, եւ **Քօլ-աղասիի** աստիճանով դուրս կելլէ: Այս ասպարէզին մէջ Գաբրիէլ անշուշտ կազարեաններու, Մատթեաններու, Լօրու-Մելիքեաններու, Տէր-Ղուկասեաններու եւ ուրիշ համազգի